

ՈՂՄԵՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԱԾԵՆ ԿՈՂՄԵՏՐՈՒՄ

Անցած 1943 թվի սեպտեմբերի 27-ին Ամենայն Հայոց Հայրապետության ազգային տեղակալ Տ. Գևորգյան արքեպիսկոպոս Չեղերջյանի հանձնարարությամբ մեկնեցի զեպի Հյուսիսային Կովկաս՝ ծանոթանալու հայ եկեղեցիների և նրա հաժապող համայնքների հոգևոր գործերի հետ, եկեղեցիների համար նոր եկեղեցական խորհրդի անդամներ ընտրելու և եկեղեցիների դրամական հաշիվները ստուգելու ու կարգավորելու նպատակով:

Մեր աղբյուր ճանապարհորդությունը տևեց մոտ մի ամիս: Մեր այցելած ամեն մի քաղաքում, Հայաստանի պատերազմական դժուրության հետ կապված որոշ գոյությունների, տեղական քաղաքականների նախադասները ցույց տվին վերին աստիճանի սիրով և վերաբերմունք՝ որսամարդերով հարմար շնորհներ մեր ժողովների համար:

Այդ ճանապարհորդության միջոցին մենք իրազեկ եղանակով փայտաղություններին, որ զերմանացիները կատարել են իրենց հնչյունային տիրապետության գաղափարով: Վրացիականության շրջակայքից սկսած մինչև Ռուսաստան կարծես ինչ որ մի խորտակելի հրաշունչ մերկի էր անցել այդ զեղեցիկ ու հարուստ՝ արքայական երկրի վրայով և իր ամբիջի հետքեր թողել ամենուրեք:

Բանուկ երկաթուղադները խանդավառված ու քանդված էին, հոյակապ կամուրջները պայթեցված, միջխորի կայարաններին շենքերը հրկիզված ու ամբողջ: Չորս կողմը թափված էին վաղոճների ու շուրջը շարժվող այրված և ջարդ ու փշուր կրած երկաթյա կմախքներ: Հատկապես խիստ հուզիչ էին Բուդյոննի-Պետրովսկի դուղա-

քաղաք—Ստալինոպոլ երկաթուղադի երկու կողմերում եղած բնակիչ կետերի ամբողջ ու թշուրտքները:

Նախկին զեղեցիկ քաղաքների ներկա տեսքը խիստ սրտաճգին էր: Առանձնապես ծանր ապավորություն է դրժում ուղևորի վրա Ռուստովի, Արմավիրի, Կրասնոդարի և Պյատիգորսկի տեսքը: Որոշ թաղամասեր գրեթե ամբողջով տեսք են ընդունել: Գաղաքների գրեթե բոլոր հյուսիսայինները, կրթական բազմաճյուղ շենքերը, խոշոր տները պայթեցված, հողին էին հավասարեցված:

Ռուստովի, Կրասնոդարի, Արմավիրի ու Հանքային Ջրերի շենք կայարանները տնտեսապես էին դարձել: Ռուստովի էնդեղիկ անփան լայնաբաժնի փողոցի երկու կողմերում երբեմն խոյանցած երկամասեր տներ լույս պատերն էին ցցված և շատ տխուր ապավորություն էին թողնում անցորդի վրա: Արմավիրի կայարանի սիրուն շենքերը և նրա մերձակա փողոցների շուրջը եղած բարձրաշեն տները հիմնովին քար ու քանդ էին եղած: Գրեթե նույն միջակում էր նաև Կրասնոդարը:

Չտեսնված ամբողջությունների էին նախադրված նաև եկեղեցիները, որոնց թվում և հայ եկեղեցիները: Գյուրգինսկի հայոց զեղեցիկաշեն եկեղեցին ևս, որ ճարտարապետական մեծ արժեք ունեցող կոթողներից մեկն էր, հիմնահատակ կործանվել էր զերմանացիների կողմից: Նա վրատակների մի կույտ էր ներկայացնում:

Վերին աստիճանի ծանր ապավորություն են թողնում ուղևորի վրա տեղացիների պատմածները բնակիչների նկատմամբ զերմանացիների դրժած անդժուկությունների մասին:

Մուտք դործելով դուռերը և քաղաքները՝ նրանք խաղաղ բնակչության մի մասին քաղաքից դուրս էին բերել և անվթաբար կոտորել, չխնայելով ոչ ծնրերին և ոչ մանուկներին:

Դրալիս քաղաքներում ու դուռերում նրանք սկսել էին թալանել բնակչությանը:

Տեղացիները պատմում էին, որ գերմանական զինվորները օրը ցերեկով մշտնում էին տները և թալանում:

Դերմանական զինվորներից պակաս անվթաբաններ էլ կատարել դաշնակցական տարահույսի Դրոն: Նա իր քաղերով աշխատել էր հետ չմնալ իր տներից, որոնց կողմից վարձվել է:

Նա ամեն կերպ աշխատել էր հաճույանալ գերմանական իմպերիալիստներին, որոնց նախորդները թելադրությամբ ու ծրարելով կաղմակերպված էին հարյուրհազարավոր մեր անմեղ թյուրքահայ ընտանիքային տեղահանությունն ու ջարդերը:

Ամիթը կորցրած այդ մարդիկ հանդիսառն ուղում տալ նույնիսկ առաջին իմպերիալիստական պատերազմի ջարդերից մի կերպ ճողոպրած և Հյուսիսային Կովկաս ապստամբած մեր տաճկահայ եղբայրներին, որոնք զրկարաց ընդունվել և սերով հյուրընկալվել են Հյուսիսային Կովկասի քաղաքներում և սերով ապրում են ուս եղբայրներին հետ:

Նրանք աշխատել են թունավորել մեր հայ եղբայրները չբնապատը: Նրանք դժբախտություն ու կորստյան նոր դռներ բաց անելով, առաջարկել են տեղացիներին կամավորներ տալ և օգնել իրենց ավանտյուրիստական արշավին:

Ծիծաղալարժ է, որ հայ ժողովրդի թշնամին՝ դավաճան Դրոն, հանդես է եկել հայ եկեղեցու ու կրոնի զինք սաշտապանի գերում: Կիսլավոզսկի, Պյատիգորսկի, Արմավիր եղած ժամանակ նա կարգադրել է հայ եկեղեցական խորհուրդներին՝ հիմնել բարեկործական ընկերություններ և հան-

դանակություններ սկսել հողուտ գերի, հիվանդ ու վերամյոր հայ զինվորներին:

Սակայն շուտով բացվել էր նրա դիմալը: Ինչպես Նիդեռն է ասում՝ «ի վերին երեսս թաղուցանէր դիմառ մտացն իւրոց»:

Խաբելով միամիտ հայ հավատացյալներին, նա եկեղեցիներից հարյուր հազարներ է կորզել և այդ միջոցներով իր համար բանեկետներ, խրախճանքներ սարքել, աշխատելով փծուն ճառերով մոլորության մեջ ձղել ու դալթակեցնել հայ հավատացյալներին:

Նա չի քաշվել անդամ միջամտել հայոց եկեղեցու ներքին, հոգևոր դործերին՝ խախտելով հայ եկեղեցու դարավոր ավանդությունները:

Նա Պյատիգորսկ է բերել ավել ուս մի եպիսկոպոսի և սովալել Սարգիս անունով մի տերացուի քահանա ձեռնադրել:

Սակայն այդ խաչադողը շուտով վախճում է գերմանացիների ու Դրոյի հրոսակախմբերի հետ, իր հետ տանելով եկեղեցու թանկարժեք ապաններն ու ըդդեստները: Թալանչիներն իրենց հետ տարել են նաև Կրասնոդարի եկեղեցական խորհրդի անդամներ Ավագյան Զուրարի ու Թումանյան Իսիդուհու միջոցով եկեղեցու խաչի համար հանդանակված ամբողջ արծաթեղենը, շուրջառների համար հավատացյալների նվերաբերած մետաքս ու թավլե թանկարժեք կտորները և այլն:

Հյուսիսային Կովկասում մեր կատարած ճանապարհորդության ժամանակ, սակայն, մենք միևիթարական և ուրախալի մի բան տեսանք, — այդ տեղացիներին չինարար ու ոտեղծադուրծ ուղին էր, որ ըսկսել էր հանդես դալ գերմանացիներից ադատարկված չրջաններում: Ամենուրեք նկատվում էր չտեսնված եռուղես ու բնղուն աշխատանք ավերակները վերականգնելու համար:

Հյուսիսային Կովկասի հավատացյալ համայնքները ես սկսել են կարգի բերել և բարեկարգել իրենց եկեղեցիները: Այսպես, օրինակ, Օրջնիկիձեի եկեղեցին 67 հազար ռուբլու չքեղ վերանորոգություն

էր կատարել և Ամեն. Հայոց Հայրապետութեան Տ. Տեղակալից իր համար հատուկ քահանա հրավիրել:

Նոր-Նախիջևանի եկեղեցին ևս մեծ դումարի վերանորոգութիւններ էր արել: Նա այժմ պահում է 30 հոգուց բաղկացած երգեցիկ քառաձայն խումբ:

Արմավիրի եկեղեցին տասնյակ հաղարներ է ծախսել, դնելով եկեղեցու վերանորոգութեան և եկեղեցու շուրջը ցանկապատելու համար անհրաժեշտ նյութեր:

Այստեղ ևս Ամեն. Հայոց Հայրապետութեան Տ. Տեղակալի կողմից նոր քահանա է նշանակւում:

ՍՈՒՐԵՆ Մ. ՎԱՐԴԱՊԵՏ

